ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР
Հասարակական գիտություններ № 4, 1957 Общественные науки

ՀՈԿՏԵՄԲԵՐՅԱՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՌԵՎՈԼՅՈՒՑԻԱՅԻ 40-ԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ

Հ. Սահակյան

Վ. Ի. ԼԵՆԻՆԻ ՑՈՒՑՈՒՄՆԵՐԸ ԱՆԴՐՖԵԴԵՐԱՑԻԱՅՈՒՄ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Կոմունիստական պարտիայի և նրա հիմնադիր Վ. Ի. Լենինի իմաստուն մտահղացումով ու նախաձեռնությամբ ստեղծված Անդրկովկասյան Ֆեդերացիան անցել է դժվարին ու փառապանծ ուղի։ Այդ պետական միության կազմավորումը պատմական անհրաժեշտություն էր, որը բխում էր երկրամասի ժողովրդական տնտեսության սոցիալիստական վերակառուցման ու բազմազգ աշխատավորների միջև եղբայրական բարեկամության ստեղծման կենսական շահերից։

Անդրկովկասում սովետական կարգերի հաստատման հենց առաջին օրերից Վ. Ի. Լենինը մեծագույն ուշադրություն էր հատկացնում երկրամասի ազգությունների միջև հաստատուն խաղաղություն ստեղծելու, Սովետական իշխանությունն ամրապնդելու, ավերված ժողովրդական տնտեսությունը վերականգնելու, աշխատավորների նյութական բարեկեցությունը բարձրացնելու հարցերին։ Այդ ոգով էին տոգորված Կովկասի կոմունիստներին ուղղված նրա նամակները, ինչպես և մի շարք հոդվածներն ու ելույթները։

Վ. Ի. Լենինը 1921 թ. ապրիլի 9-ին ՌԿ(բ)Պ Կենտկոմի Կովկասյան բյուրոյի ղեկավար Գ. Կ. Օրջոնիկիձեին գրած նամակում պահանջում էր ամբողջ Անդրկովկասի համար ստեղծել մարզային մի մարմին, միավորել ռեսպուբլիկաների տեղական ռեսուրսները՝ ոռոգումն առաջ մղելու, հողագործությունն ու անասնապահությունը, ինչպես նաև ապրանքափոխանակությունը զարգացնելու համար[1]։ Լենինյան այս ցուցումը հիմք ծառայեց Անդրկովկասյան Սովետական Ռեսպուբլիկաների տնտեսական միավորման համար։

1921 թ. ապրիլի 11-ին Բաքվի Սովետը, արտահայտելով Բաքվի պրոլետարիատի և ամբողջ աշխատավորության կամքը, իր բանաձևում նշում է, որ երկրամասում Սովետական իշխանությունն ամրապնդելու, տնտեսական հզորությունը բարձրացնելու համար անհրաժեշտ է երկրամասի բոլոր սովետական ռեսպուբլիկաների տնտեսական միավորումը, ազգային սուվերենության լիակատար պահպանման հիման վրա[2]։

Հաշվի առնելով Կովկասի կոնկրետ պայմաններն ու առանձնահատկությունները, Վ. Ի. Լենինը 1921 թ. ապրիլի 14-ին գրում է իր ծրագրային նամակը «Ադրբեջանի, Վրաստանի, Հայաստանի, Դաղստանի լեռնականների ռեսպուբլիկայի կոմունիստ ընկերներին», որն Անդրկովկաս է ուղարկվում Ա. Ֆ. Մյասնիկյանի ձեռքով։ Լենինի դիրեկտիվ նամակը դարձավ Անդրկովկասի կո-

---

[1] Տե՛ս Վ. Ի. Լենին. *Երկեր*, հատ. 35, էջ 521։

[2] «Պրավդա Դրուզիի», № 41, Թիֆլիս, 20 ապրիլի, 1921։

մունիստական կազմակերպությունների և ամբողջ աշխատավորության ստեղծագործական աշխատանքի ու պայքարի ուղեցույցը։

Կովկասում Սովետական իշխանության պահպանման, ազգային խաղաղության ամրապնդման ու սոցիալիզմի կառուցման համար առաջնորդը պահանջում էր, որ երկրամասի կոմունիստները, հաշվի առնելով տեղական կոնկրետ պայմանների յուրօրինակությունը, նույնությամբ, մեխանիկորեն չընդօրինակեն, այլ սեփական նախաձեռնությամբ, մտածված կերպով, ստեղծագործորեն կիրառեն պարտիայի տակտիկան՝ 1917—1921 թթ. փորձի ոչ թե տառը, այլ ոգին, իմաստը, դասերը։ Վլադիմիր Իլյիչն այդ նամակում հատուկ ուշադրություն է նվիրում աշխատավորների դրության բարելավման գործին։

Այդ բանին հասնելու համար, նախ և առաջ անհրաժեշտ է վերականգնել տնտեսությունը, վերականգնման աշխատանքներն սկսել գյուղատնտեսությունից, ոռոգումից։ Ոռոգումը, էլեկտրիֆիկացիան,— ընդգծում էր Լենինը,— հատկապես կարևոր է, հողագործությունն ու անասնապահությունը ամեն գնով բարձրացնելու համար ...այն կվերաստեղծի երկիրը, կվերածնի նրան, կթաղի անցյալը, կամրապնդի անցումը դեպի սոցիալիզմ։

Կոմունիզմը՝ դա Սովետական իշխանությունն է պլյուս ամբողջ երկրի էլեկտրիֆիկացիան—լենինյան այս դրույթը դրվեց ժողովրդական տնտեսության արմատական վերակառուցման՝ ԳՈԷԼՌՈ-ի պլանի հիմքում, որը հանդիսացավ կոմունիստական շինարարության գլխավոր պայմաններից մեկը։

Անդրկովկասի պարտիական կազմակերպությունները, առաջնորդվելով Վ. Ի. Լենինի իմաստուն ցուցումներով, ստեղծեցին մի միասնական տնտեսական ու քաղաքական կենտրոն։

Այդ էր պահանջում ազգային խաղաղությունը,— ընդգծում էր Ս. Օրջոնիկիձեն,— առանց որի անհնարին է մի քայլ անգամ անել դեպի առաջ՝ Անդրկովկասի ժողովուրդների կյանքի որևէ բնագավառում[1]։

* * *

ՍՍՌՄ-ի կազմակերպումով սկսվում է Սովետական պետության, նրա էկոնոմիկայի ու կուլտուրայի լայն զարգացման ժամանակաշրջանը։ Անդրկովկասյան Ֆեդերացիայի, ինչպես և մյուս սովետական ռեսպուբլիկաների տնտեսական ու կուլտուրական բազմակողմանի զարգացման համար անսահման հնարավորություններ են ստեղծվում։

Անդրկովկասի բանվորներն ու գյուղացիները, ռուս մեծ ժողովրդի մշտական և անշահախնդիր օգնությամբ, Կոմունիստական պարտիայի ամենօրյա ղեկավարությամբ, վիթխարի աշխատանք են կատարում վերականգնման շրջանի լուրջ դժվարությունները հաղթահարելու, իրենց նորաստեղծ ռեսպուբլիկաների կուլտուրան և տնտեսությունն առաջ մղելու ուղղությամբ։

Վ. Ի. Լենինը, չնայած վատառողջությանը, ջերմ հոգատարությամբ է վերաբերվում Կովկասի ժողովուրդներին։ Նա աշխույժ կերպով հետաքրքրվում է ամեն ինչով,— պատմում է Ալ. Մյասնիկյանը Լենինի հետ ունեցած իր հանդիպման մասին,— ծիծաղում է, ուրախանում։ Նա հարցրեց մեր կովկասյան գործերից,

[1] Գ. Կ. Օրջոնիկիձե. Հոդվածներ և ճառեր, էջ 227։

Ֆեդերացիայից, հարց բարձրացրեց ոռոգման, Մուղանի բամբակի, ազգային հարաբերությունների մասին»։

Լենինը խորհուրդ էր տալիս լուրջ ուշադրություն դարձնել բամբակագործությանը, խոստանալով լիակատար աջակցություն։ Նրա օգնությամբ ռեսպուբլիկաների քաղաքների և հիմնարկությունների ներկայացուցիչներին հաջողվում է Մուղանի բամբակային տնտեսության համար ստանալ տրակտորներ, սուբսիդիա, ինչպես և վարկ ստանալ Բաքվի տրամվայի, Թիֆլիսի (Ավչալայի) հիդրոկայանի համար։

Վերականգնվում և օրավուր ամրապնդվում էին Սովետական Ռուսաստանի և Անդրֆեդերացիայի առևտրական կապերը։

Անդրկովկասի կոմունիստական կազմակերպությունների II համագումարը (1923 թ. մարտ) լսում և քննարկում է Ս. Օրջոնիկիձեի հաշվետվությունը Անդրերկոմի գործունեության մասին։ Վերլուծելով Կոմունիստական պարտիայի տնտեսական քաղաքականությունն Անդրկովկասում, Ս. Օրջոնիկիձեն մատնանշում է, որ հատուկ ուշադրություն է դարձվում բամբակագործության զարգացմանը՝ Ադրբեջանում և Հայաստանում։

Սովետական Ռուսաստանը Հայաստանին արդեն բաց էր թողել 640 հազար ռուբլի ոսկով, Ադրբեջանին՝ 800 հազար ռուբլի ոսկով՝ Մուղանի համար տրակտորներ գնելու, բամբակի մշակությունն արմատավորելու նպատակով։

Ա. Ֆ. Մյասնիկյանը համագումարում զեկուցում է «Տնտեսական շինարարության խնդիրների մասին» և ապա առաջադրում է այդ հարցի վերաբերյալ իր թեզիսները[2]։ Պարտիական համագումարը քննարկում է Վրաստանի, Հայաստանի և Ադրբեջանի ժողովրդական տնտեսության վիճակը, ամփոփում է երկրամասի էկոնոմիկայի բոլոր ճյուղերի վերականգնման գծով կատարվող աշխատանքները, նշում է գյուղատնտեսության հետամնացությունը։ Համագումարը մեծ ուշադրություն է նվիրում ծանր արդյունաբերության գլխավոր ճյուղերի ընդարձակման հարցերին։ Առաջին պլանի վրա է դրվում նավթի, մարգանեցի, բարտծխի, պղնձի, աղի հանույթի ավելացման խնդիրը։ Միահամուռ կերպով ընդգծվում է Անդրկովկասի էլեկտրոէներգիայի հսկայական պաշարները լենինյան պլանով օգտագործելու անհրաժեշտությունը, նշվում է, որ սպիտակ ածուխի վիթխարի էներգիան ոչ միայն կրավարարի Անդրկովկասի կարիքները, այլև կտա 1,5 միլիարդ ՀԻու ուժ ավելցուկ։ Միայն էլեկտրականությունը կվերածնի Անդրկովկասը[3]։

Անդրկովկասյան ֆեդերացիայի կառավարությունը ՌԿ(բ)Պ Անդրերկոմի օպերատիվ ղեկավարությամբ նյութական-ֆինանսական պայմաններ է ստեղծում երկրամասի գյուղերի տնտեսական կյանքը բարելավելու, արդյունաբերության ավերված օբյեկտները վերաշինելու, տրանսպորտը փակուղուց դուրս բերելու, աշխատավորների նյութական դրությունը բարելավելու համար։ ՌԿ(բ)Պ XII-րդ համագումարը (1923 թ. ապրիլ) պայքարը հանուն ազգությունների փաստական անհավասարության լիկվիդացման, հետամնաց ժողովուրդնե-

---

[1] «Խորհրդային Հայաստան», № 235, 18 հոկտեմբերի, 1922։

[2] ՍՄԿՊ կենտկոմին կից Մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի Վրացական ֆիլիալի պարտ. արխիվ, ֆ. 13, գ. 207, թ. 39։

[3] Անդրկովկասի կոմունիստական կազմակերպությունների II համագումարի ստենոգրաֆական հաշվետվություն, էջ 17։

րի տնտեսական ու կուլտուրական բարձր մակարդակի՝ հռչակում է պարտիայի երկրորդ հերթական ինդիրը։

Պարտիայի XII համագումարի և Կենտկոմի IV խորհրդակցության որոշումները կենսագործելու նպատակով, 1923 թ. հունիսի 26-ին հրավիրվում է Անդրերկոմի պլենումը, որը նշում է երկրամասի գյուղատնտեսության ու արդյունաբերության վերականգնման ընթացքն արագացնելու գործնական միջոցառումները։ Ինչպես ամբողջ Սովետական երկրում, Անդրկովկասյան Ռեսպուբլիկաներում ևս ժողովրդական տնտեսության վերականգնումը 1921—1925 թթ. տալիս է մեծ արդյունքներ։

Որո՞նք էին այդ բնագավառում ձեռք բերված գլխավոր նվաճումները։ Ցանքատարածությունն Ադրբեջանում 1925 թ. կազմում էր մինչպատերազմյան մակարդակի 102,4, Վրաստանում՝ 92,8, Հայաստանում՝ 89,4 տոկոսը։ Բամբակոմը Կիրովաբադում կառուցում է ձեթ-օճառի գործարան, որի վրա ծախսվում է 4 միլիոն ռուբլի։ Ծխախոտագործությունը, որ Արխազիայում մենշևիկների օրոք հասել էր զրոյի, վերականգնված է 81 տոկոսով։ Թեյի արտադրությունը մինչպատերազմյան 400 հազար ֆունտից բարձրացվեց մինչև 650 հազար ֆունտի։

Անդրկովկասի կոմունիստները, գլխավորելով բանվորա-գյուղացիական զայն մասսաների աշխատանքային խանդավառությունը, կենսագործում են Վ. Ի. Լենինի «Պայքարեցեք ոռոգման և ոչնչացած կուլտուրաների վերականգնման համար» հայտնի ցուցումը։ Լայն աշխատանք է ծավալվում սակավահողությունը վերացնելու ուղղությամբ։ Ոռոգման սիստեմի վրա արդեն ծախսվել էր 6 միլիոն ռուբլի։ Կառուցվում էին Ալազանի, Սարդարաբադի, Կարա-Սախկալի, Էլդարի, Տիրպոնիսվելիի, Շիրակի և այլ ջրանցքները։ Միայն վերջինս ոռոգում էր 15 հազար դեսյատին հող։ Հայաստանի ՍՍՌ-ում չորացվում էր 46 400 դեսյատին ճահիճ[2]։

Արդյունաբերության բնագավառում 1920 թ. արդյունահանվել էր 152 200 հազար փութ նավթ, 1925 թ.—280 միլիոն։ Նավթարդյունաբերության մեջ սկսվել էր լայնորեն կիրառվել պտուտակային հորատման եղանակը։ Պղնձարդյունաբերության հանույթը 1917—1924 թթ. ամբողջ Անդրկովկասում հավասար էր 4 հազար փթի, իսկ միայն 1925 թ. այն հասել էր 49 414 փթի։ Նախիջևանում աղի հանույթը 1913 թ. կազմել է 427 000 փութ, իսկ 1925 թ.—1 467 հազար փութ, այսպիսով, տալով 243 տոկոս աճ[3]։

Երկրամասի էլեկտրիֆիկացման գործում, ասել է Ս. Օրջոնիկիձեն, նույնիսկ համեմատելու բան չկա։ Սովետական իշխանությունը աշխատավորների ջանքերով կառուցում է մեծ կայաններ՝ 52 հազար ձիաուժ ընդհանուր հզորությամբ, ծախսելով դրա վրա 25 միլիոն ռուբլի։ Արդյունաբերության մեջ ընդամենը զբաղված էր 57 231 բանվոր։

1923 թ. Անդրֆեդերացիայի ամբողջ ժողովրդական տնտեսության եկամուտը կազմում էր ընդամենը 121.510.586 ռուբլի։

---

[1] Մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի Վրացական ֆիլիալի պարտ. արխիվ, ֆ. 13, գ. 944, թթ. 26—31։

[2] Մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի Հայկական ֆիլիալի պարտ. արխիվ, ֆ. 1, գ. 19, թ. 5։

[3] Մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի Վրացական ֆիլիալի պարտ. արխիվ, ֆ. 13, գ. 944, թթ. 32—37։

Զգալի հաջողությունների էր հասել նավթային արդյունաբերությունը։ Դեռևս 1920 թ. դեկտեմբերին, Սովետների Համառուսաստանյան VIII համագումարում Վ. Ի. Լենինը գոհունակությամբ էր նշում, որ մեր միջև հաստատված բարեկամական հարաբերությունների պայմաններում, Ադրբեջանական ռեսպուբլիկայում բանվորների ցուցաբերած խանդավառության շնորհիվ, նավթի գործը լավ է ընթանում և մենք սկսում ենք սեփական ոտքերի վրա կանգնել նաև վառելիքի հարցում[1]։

Լենինը ամեն կերպ խրախուսում ու ոգեշնչում էր Բաքվի նավթագործներին՝ նավթային տնտեսությունն առաջ շարժելու, նոր տեխնիկան արմատավորելու, հորատման գործը բարելավելու խնդրում։

Վ. Ի. Լենինի ցուցումների ոգով ՌԿ(բ)Պ Կենտկոմի Նավթային հարցերի հանձնաժողովը մշակում է Բաքվի նավթային արդյունաբերության վերականգնման և արմատական տեխնիկական վերակառուցման պլան։ Նոր տեխնիկայի արմատավորումը կատարյալ հեղաշրջում առաջացրեց այդ ճյուղում։

Բաքվի բանվորները, Ադրբեջանի աշխատավոր գյուղացիությունը և ինտելիգենցիան, ԱԿ(բ)Պ-ի ղեկավարությամբ, եռանդուն ջանքերով հաղթահարելով վերականգնման շրջանի դժվարությունները և դասակարգային թշնամիների ոտնձգությունները, զգալի հաջողությունների են հասնում տնտեսության բոլոր ճյուղերում։

Առաջ են գնում տրանսպորտի վերականգնման և երկաթուղային նոր գծերի կառուցման աշխատանքները։ Բաքու — Ջուլֆա (մինչև Բեդամլի կայարանը) երկաթգծի կառուցման ավարտումը 1924 թ. հունիսին տնտեսական ճակատում տարած հսկայական հաղթանակ էր[2]։

Տնտեսական-շինարարական լայն աշխատանքներ են ծավալվում նաև Նախիջևանի երկրամասում։ Երկրամասային գործկոմի 1923 թ. մայիս ամսվա գործունեության վերաբերյալ զեկուցագրում[3] ասված էր, որ սկսված է 20 օբյեկտի վերականգնումը, արդեն ավարտված է Աշխատանքի պալատի, բաղաքային բաղնիքի, գործկոմի պահեստների, երեք կամուրջի կառուցումը։ Դաշնակների և մուսավաթականների կողմից կազմակերպված ազգամիջյան կռիվների հետևանքով քայքայվել էր նաև ոռոգման սիստեմը։ Գյուղատնտեսությունն առաջ մղելու և աշխատավորների դրությունը բարելավելու նպատակով եռանդուն աշխատանք է կատարվում հին ջրանցքների վերանորոգման և նորերի կառուցման ուղղությամբ։

Պարտիայի և Սովետական իշխանության բացահայտ ու թաքնված թշնամիները՝ տրոցկիստները, բուրժուական նացիոնալիստները, կապիտալիստական տարրերը, սմենովեխականները նենգամտորեն օգտագործելով տնտեսության վերականգնման դժվարությունները, Վ. Ի. Լենինի մահը լայն ճակատով գրոհ սկսեցին լենինիզմի դեմ, սոցիալիստական շինարարության դեմ։

ՌԿ(բ)Պ Անդրկովկասյան Երկրային Կոմիտեի 1925 թ. դեկտեմբերյան ընդլայնված պլենումը, արտահայտելով պարտիական մասսաների կամքը, դատապարտեց տրոցկիստների հակապարտիական վարքագիծը և ջերմորեն պաշտպանեց պարտիայի մարտական միասնության լենինյան սկզբունքը։ Այդ սկզբունքը, ինչպես ասված է պլենումի բանաձևում, պրոլետարիատի դիկտատու-

[1] Տե՛ս Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 31, էջ 644։
[2] «Մարտակոչ», № 130, Թիֆլիս, 29 հունիսի, 1924։
[3] Վրացական ՍՍՌ Պետական կենտրոնական արխիվ, գ. 47, թ. 10։

բայի պայմաններում մնում է և պետք է մնա լիակատար ուժի մեջ, ոչ մի չափով չպիտի թուլացվի...[1]։

Պլենումը Ս. Օրջոնիկիձեի «Ներպարտիական դրության մասին» զեկուցման առթիվ ընդունում է որոշում, որով պարտիական բոլոր կազմակերպություններին կոչ է արվում համախմբվել ՌԿ(բ)Պ Կենտկոմի շուրջը, լենինիզմի դրոշով պայքարել պարտիայի նոր տնտեսական քաղաքականության կենսագործման համար։

Միասնական ու կայուն դրամական սիստեմի բացակայությունը ՍՍՌՄ-ում մեծ չափով խանգարում էր տնտեսության վերականգնմանը, պետական ու կոոպերատիվ առևտրի ծավալմանը, աշխատավորների նյութական մակարդակի բարձրացմանը։ Հաղթահարելով տրոցկիստների և կուլակային-նեպմանական տարրերի դիմադրությունը, Սովետական պետությունը 1924 թ. կեսերին անցկացրեց դրամական ռեֆորմ, վերացվեցին հին արժեքազրկված դրամները, սահմանվեց ՍՍՌՄ-ի միասնական դրամանիշ՝ կայուն վալյուտա-չերվոնեցը, որը շրջանառության մեջ մտավ նաև Անդրկովկասյան Ֆեդերացիայում։ «Ամենածանր պրոբլեմը,— նշել է Մ. Օրախելաշվիլին,— որ կար Անդրկովկասում, ֆինանսական պրոբլեմը, վերջնականապես լուծված է»[2]։

Պարտիայի և Սովետական իշխանության կողմից կիրառվող նոր ֆինանսական քաղաքականությունը հզոր լծակ հանդիսացավ ժողովրդական տնտեսության սոցիալիստական վերականգնման գործում։

Սովետական երկրի բանվորա-գյուղացիական մասսաների աշխատանքային սխրագործությունը տալիս էր իր փայլուն արդյունքը։ 1925 թ. վերջին ավարտվում է ամբողջ ժողովրդական տնտեսության վերականգնման գործը։

1925/26 թթ. ՍՍՌՄ-ի գյուղատնտեսությունը հասնում է նախապատերազմյան մակարդակին, տալով մինչպատերազմյան արտադրանքի 103 տոկոսը։ Նույնպիսի հաջողություններ են ձեռք բերվում նաև արդյունաբերության ու տրանսպորտի բնագավառում։

Ստեղծվում են բոլոր անհրաժեշտ նախադրյալները սովետական ամբողջ էկոնոմիկայի վերակառուցման, կուլտուրական ռևոլյուցիայի կենսագործման և սոցիալիստական հասարակարգի հիմքի կառուցման համար։

* * *

Կոմունիստական պարտիան հիմք ընդունելով Վ. Ի. Լենինի հայտնի պատգամը պրոլետարական դիկտատուրայի երկրում լիակատար սոցիալիզմի կառուցման մասին, գտնում էր, որ ՍՍՌՄ-ի բանվոր դասակարգը և գյուղացիությունը միայն ներքին միջոցներով կարող են ստեղծել սոցիալիստական հասարակության նյութական բազան, ծանր արդյունաբերությունը, ապահովել երկրի անկախությունը և կենսագործել ժողովրդական տնտեսության սոցիալիստական վերակառուցումը[4]։

Պարտիայի XIV համագումարը (1925 թ. դեկտեմբեր) ՍՍՌՄ-ում սոցիալիստական շինարարության հաղթանակի համար մղվող պայքարը համարեց կո-

---

[1] *Մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի Վրացական ֆիլիալի պարտ. արխիվ, ֆ. 13, գ. 184, թթ. 35—36։*

[2] *ՀՍՍՌ Սովետների 3-րդ համագումարի սղագրական հաշվետվութ., էջ 90։*

[3] *Տե՛ս Վ. Ի. Լենին. Երկեր, հատ. 33, էջ 556։*

[4] *ՍՄԿԿ-ն բանաձևերում և որոշումներում, II մաս, էջ 205։*

մունիստական կազմակերպությունների հիմնական խնդիրը։ Մերկացնելով օպորտունիստական թերահավատության հակալենինյան թեորիան, համագումարը նշեց սոցիալիզմի կառուցման ուղին, պրոլետարիատին և ամբողջ աշխատավորությանը զինեց նոր կյանքի ստեղծման լենինյան ուսմունքով։

Անդրկովկասի բազմազգ ժողովուրդները ՌԿ(բ)Պ Երկրային Կոմիտեի և Ֆեդերացիայի կառավարության առանդուն գործունեությամբ հաստատելով ազգային խաղաղություն, համերաշխ ու համատեղ ջանքերով վերակառուցում են իրենց էկոնոմիկան, ժողովրդական տնտեսության բոլոր բնագավառներում ձեռք բերում խոշոր նվաճումներ։

1926 թ. մայիսմեկյան տոնին բացվում է Երևանի հիդրոէլեկտրակայանը։ Հուլիսին շահագործման է հանձնվում ՍՍՌՄ-ում առաջին էլեկտրական երկաթուղին, որը Բաքուն միացնում է նավթահանքերի և Սաբունչի ավանի հետ։

Անդրկովկասի կոմունիստական կազմակերպությունների IV համագումարը (1925 թ. դեկտեմբեր), ամփոփելով ժողովրդական տնտեսության վերականգնման արդյունքները, որոշեց պարտիայի անելիքները գյուղում և նշեց երկրամասում ինդուստրիալ բազաներ ստեղծելու ուղիները[1]։

Խոշոր ֆինանսական միջոցներ են ներդրվում ինչպես հին արդյունաբերական ճյուղերի վերականգնման, նույնպես և նորերի ստեղծման համար։

Վրացական ՍՍՌ-ում առանձնապես ուշադրություն է դարձվում Տկվիբուլիի քարածխի հանույթի, ցեմենտի գործարանի, մետալուրգիական տրեստի, Թիֆլիսի մահուդի ֆաբրիկայի, Սուխումի ծխախոտի ֆաբրիկայի կառուցման, մետաքսագործության, անտառային տնտեսության, թղթի ֆաբրիկայի և պոլիգրաֆիկ արդյունաբերության զարգացման վրա։

Ադրբեջանում հսկայական միջոցներ են ներդրվում ծծմբաքարի, բարիտի, աղի հանույթի, ցեմենտի, մետաքսի, տեքստիլ արդյունաբերության և ձկնարդյունաբերության, մետաղամշակության գործում։

Հայաստանում զարկ է տրվում բազալտի, տուֆի արտադրությանը, ծծմբա-ցինկային արդյունաբերության գործին։ Ընդարձակվում է պեմզայի հանույթը, ստեղծվում են ծծմբաքարի, ցեմենտի, մեխանիկական գործարաններ և այլն։

ԱՍՖՍՌ-ի 1926/1927 տնտեսական տարվա պետական և տեղական բյուջեներում հատուկ ուշադրություն է նվիրվում երկրամասի ինդուստրացման հարցին։ Առաջնահերթ խնդիր է համարվում կառուցվող արդյունաբերական նոր ձեռնարկությունների, էլեկտրակայանների ֆինանսավորումը[2]։

Ուշագրավ է ԱՍՖՍՌ-ի 1927/28 տնտեսական տարվա միասնական պետական բյուջեն, որը կազմում էր եկամտի գծով 88.068.948 ռ., ծախսերի գծով՝ 99.881.055 ռուբլի։

Դեֆիցիտը կազմում էր մոտ 11.812.117 միլ. ռուբլի, որը ծածկվում էր համամիութենական բյուջեի հաշվին[3]։

Այդ նույն տնտեսական տարում գյուղատնտեսության և ոռոգման վրա ծախսվում է 5.262.000 ռ.։ Արդյունաբերությանը հատկացվում է 17.614.000 ռ., որից էլեկտրակայանների կառուցման վրա ծախսվում է 3.327.000 ռուբլի[4]։

---

1 Մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի Վրացական ֆիլիալի պարտ. արխիվ, ֆ. 13, գ. 944, թթ. 14, 20։

2 Վրացական ՍՍՌ Պետական կենտրոնական արխիվ, ֆ. 607, գ. 705, թ. 22։

3 Նույն տեղում, գ. 1303, թ. 1։

4 Նույն տեղում։

Կառուցվում և գործարկվում են՝ Գյանջայի, Նուխու, Թոուզի, Լենինականի, Իջևանի, Երևանի, Աջարիսցխալիի, Աբալիսի, Սուխումի էլեկտրակայանները։

1927 թ. շահագործման է հանձնվում Անդրկովկասյան ռայոնական հիդրոէլեկտրակայանը (Զագէս), որը հոսանք է տալիս Սովետական Վրաստանի մայրաքաղաք Թիֆլիսին։

Անդրկովկասյան կոմունիստական կազմակերպությունների V համագումարը (1927 թ. նոյեմբեր) մեծ գոհունակությամբ ամփոփեց Անդրկովկասյան Ֆեդերացիայի հնգամյա գոյության տնտեսական, քաղաքական և կուլտուրական նվաճումները։

Պարտիական համագումարը դիրեկտիվներ մշակեց ԱՍՖՍՌ-ի արդյունաբերական շինարարության վերաբերյալ։

Դիրեկտիվներում նախատեսված էր ծավալել այնպիսի արդյունաբերություն, որը հենվելով էլեկտրիֆիկացման ամուր բազայի վրա, ունենար իր սեփական հումքը՝ հանքանյութը, գյուղատնտեսական հումքը, անտառանյութը։ Դրա մեջ մտնում էին լեռնային, լեռնա-քիմիական արդյունաբերությունը, գունավոր մետալուրգիան, շինանյութերի, մետաքսի և անտառային արդյունաբերությունը։ Այնուհետև պահանջվում է ստեղծել այնպիսի արդյունաբերություն, որը կարիք է զգում էժան և առատ էլեկտրաէներգիայի։

Համագումարը կրկին անգամ վեր հանեց Ֆեդերացիայի նշանակությունը և միահամուռ կերպով ընդունված բանաձևում ընդգծվեց, «որ Անդրֆեդերացիան ժողովուրդների համեռաշխության գործիք է։ Նա Լենինի ստեղծագործությունն է, տվել է իր հսկայական շոշափելի արդյունքները և հույս ունենք, որ հետևյալ հնգամյակին նրա նվաճումների բիվն ավելի շատ կլինի»[1]։

ՍՍՌՄ-ի ինդուստրիան հզոր վերելք էր ապրում։ Սակայն գյուղատնտեսությունը շարունակում էր ետ մնալ։ Հացի պրոբլեմը չէր լուծվել, միայն արդյունաբերության, տրանսպորտի և այլ ճյուղերի հանրային սեկտորով չէր կարելի սոցիալիզմ կառուցել։ Պարտիայի և Սովետական պետության առաջ ամբողջ հասակով ծառացավ գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման հարցը, միլիոնավոր փոշիացած մանր տնտեսությունները սոցիալիզմի բազայի վրա փոխադրելու հարցը։

Կենսական կարևորություն ունեցող այդ պրոբլեմի լուծման սկզբունքները մշակում է պարտիայի XV համագումարը (1927 թ. դեկտեմբեր), որը պարտիական կազմակերպությունների առաջնահերթ խնդիրը համարեց «...Ամեն կերպ պահպանել և խրախուսել հանրայնացված գյուղացիական աշխատանքի բողբոջները»[2]։ Համագումարը անհրաժեշտ համարեց մշակել ժողովրդական տնտեսության զարգացման, սոցիալիզմի հիմքի կառուցման հնգամյա պլանը։

Կոմունիստական պարտիայի, Վ. Ի. Լենինի կողմից մշակված գյուղական տնտեսության կոլեկտիվացման ծրագիրը, թեև մեծ դժվարությունների ու արգելակների հաղթահարման գնով, բայց հաջողությամբ կենսագործվում էր նաև Անդրկովկասյան Սովետական Ֆեդերատիվ Ռեսպուբլիկայում։

Համկ(բ)Պ Անդրերկոմը 1928 թ. մայիսի 13—15-ին քննության առավ Երկրամասի տնտեսական զարգացման հերթական խնդիրները։ Ադրբեջանի, Հայաստանի և Վրաստանի Կ(բ)Պ կենտկոմներին հանձնարարվեց, հաշվի առ-

[1] «Պրոլետար» թերթ, № 31, Թիֆլիս, 23 նոյեմբերի, 1927։
[2] ՍՄԿՊ-ն բանաձևերում և որոշումներում, II մաս, էջ 332։

նելով գյուղատնտեսության հանրային սեկտորի զարգացման նշանակությունը, 1928/29 տնտեսական տարվա պլանում կոնկրետ միջոցառումներ մշակել ամեն կերպ զարգացնելու կոլտնտեսություններն ու սովխոզները, ուժեղացնելու և ընդլայնելու սովխոզների, կոլխոզների արտադրական գործունեությունը և նրանց կուլտուրական ազդեցությունը տարածելու անհատական գյուղացիական տնտեսությունների վրա[1]։

Երկրային Կոմիտեն հատուկ ուշադրություն նվիրեց նաև արդյունաբերության զարգացմանը, մատնանշվեց խոշոր հիդրոէլեկտրակայանների տնտեսական նշանակությունը։

1929 թ. ապրիլին հաստատվեց ՍՍՌՄ ժողովրդական տնտեսության սոցիալիստական վերակառուցման առաջին հնգամյա պլանը, որի հիմնական խնդիրն էր՝ մեր երկրում ստեղծել այնպիսի ինդուստրիա, որն ի վիճակի լինի վերազինել և վերակառուցել ոչ միայն արդյունաբերությունն ամբողջովին, այլև տրանսպորտն ու գյուղատնտեսությունը։ Անդրկովկասյան Երկրային Կոմիտեի պլենումը (1929 թ. մայիս) բազմակողմանիորեն քննարկեց ԱՍՖՍՌ ժողովրդական տնտեսության զարգացման հնգամյա պլանը։ Այդ հարցի մասին ընդունված որոշման մեջ մատնանշվում են Ֆեդերացիայի մեջ մտնող ռեսպուբլիկաներում էկոնոմիկայի առաջատար ճյուղը՝ ծանր արդյունաբերությունը ամեն կերպ զարգացնելու, գյուղում սոցիալիստական սեկտորը ծավալելու հեռանկարները։

Համկ(բ)Պ Կենտկոմի դիրեկտիվներին լիովին համապատասխան, պլենումը պարտիական, սովետական ստորադաս օրգաններին հանձնարարում է առավելագույն չափով զարգացնել երկրամասի էլեկտրաէներգիայի արտադրությունը, ընդլայնել մելիորատիվ և շինարարական աշխատանքները, ծավալել լեռնային, լեռնագործարանային (այդ թվում սև և գունավոր մետալուրգիայի), քիմիական արդյունաբերության և շինանյութերի (տուֆ, պեմզա և այլն) արտադրության տեմպերը։

Երկրամասի ընդերքի անսպառ հարստությունները սովետական կարգերի դոյության պայմաններում կարևոր և վճռական նախադրյալներ էին հանդիսանում Անդրկովկասի սոցիալիստական ինդուստրիայի հուժկու զարգացման համար։

Սովետների Անդրկովկասյան V համագումարը (1929 թ. մայիս) ցուցադրում է երկրամասի տնտեսական, քաղաքական ու կուլտուրական կյանքում տեղի ունեցած խորը վերափոխությունների ցայտուն պատկերը։ Այն հաստատում է ԱՍՖՍՌ ժողովրդական տնտեսության զարգացման հնգամյա պլանը։

Սովետների V համագումարի պատմական որոշումները և Անդրկովկասի աշխատավորներին ուղղված կոչը մոբիլիզացրին բանվորների, գյուղացիների և աշխատավորական ինտելիգենցիայի ուժերը, հնգամյակը ժամկետից շուտ կատարելու համար։

* * *

Անդրկովկասի Սովետական Ֆեդերատիվ Սոցիալիստական Ռեսպուբլիկայի հետագա հզորացումը սերտորեն կապված էր երկրամասում սոցիալիստական էկոնոմիկայի ստեղծման նոր խնդիրների հետ։

---

1 Մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի Վրացական ֆիլիալի պարտ. արխիվ, ֆ. 13, գ. 1969, թ. 72։

Հայտնի է, որ 1929 թ. հոկտեմբերին ՀամԿ(բ)Պ Կենտկոմի տված դիրեկտիվում առանձնահատուկ ուժով ընդգծված էր Անդրֆեդերացիայի պարտիական և սովետական օրգանների դերի ուժեղացման անհրաժեշտությունը։ ԱՍՖՍՌ-ի տնտեսական բազայի ամրապնդումը համարվում է առաջնակարգ խնդիր։ Առաջին հնգամյակի կարևորագույն առաջադրանքները Ֆեդերացիայում անթերի կատարելու համար իրականացվում է երկրամասի ամբողջ տնտեսական շինարարության կոնկրետ ղեկավարումը։ Ամրապնդվում է Անդրկովկասյան Ժողտնտեսության Գլխավոր Խորհուրդը։ Նրան տրվում են կոնտրոլ օպերատիվ ֆունկցիաներ։ Պարտիայի Կենտկոմը բազմակողմանիորեն վերլուծելով Անդրերկոմի և Ֆեդերացիայի օրգանների կողմից թույլ տրված սխալները, նրանց առջև խնդիր դրեց կենտրոնացնել իրենց ջանքերը «...Ազգային ռեսպուբլիկաների տնտեսական ու սոցիալիստական շինարարության վրա, նրանց ինդուստրացման, գյուղատնտեսության տեխնիկական ու սոցիալիստական վերակառուցման վրա»։ Անդրֆեդերացիայի տնտեսական բազան ամրապնդելու համար անհրաժեշտ է միաժամանակ ծավալել ԱՍՖՍՌ-ի մեջ մտնող ազգային ռեսպուբլիկաների լայն ինքնագործունեությունը և տնտեսական նախաձեռնությունը[1]։

Աշխատանքի արտադրողականության բարձրացման համար պայքարելը դառնում է նոր, սոցիալիստական հասարակության կառուցման գլխավոր, կարևորագույն պայմաններից մեկը։ Կոմունիստական պարտիան կենսագործելով լենինյան ցուցումները, սոցիալիստական մրցություն ծավալեց աշխատանքի արտադրողականությունը բարձրացնելու նպատակով։

Ինչպես ամբողջ Սովետական երկրում, Անդրկովկասում նույնպես աշխատավորները սոցիալիստական լայն մրցություն ծավալեցին հնգամյակի հոյակապ առաջադրանքները կատարելու համար։ Աշխատանքի կոմունիստական մեթոդները դառնում են նոր կյանքի կառուցման կարևոր լծակներ։

Անդրկովկասյան ռեսպուբլիկաները մրցության մեջ են մտնում ոչ միայն իրար հետ, այլև ՌՍՖՍՌ-ի, Ուկրաինայի և Սովետական Միության մյուս ռեսպուբլիկաների հետ։ Հայ, վրացի, ադրբեջանցի և մյուս ժողովուրդների կուլտուրական, գրական, գիտա-տեխնիկական կապերն ու համագործակցությունը է՛լ ավելի ամրապնդվեցին։ Երկրամասի ինդուստրացման, կոլեկտիվացման, կուլտուրայի ծաղկման համար, սոցիալիզմի կառուցման համատեղ ստեղծագործ աշխատանքի պրոցեսում, աճում ու հզորանում է անդրկովկասյան ժողովուրդների ինտերնացիոնալ բարեկամությունը։

Սոցիալիզմը,— մարգարեաբար կանխատեսում էր Վ. Ի. Լենինը,— կազմակերպելով արտադրությունը առանց դասակարգային ճնշման, ապահովելով պետության բոլոր անդամների բարեկեցությունը, դրանով իսկ լիակատար ազատություն է տալիս բնակչության «համակրանքներին» և հենց սրանով էլ հեշտացնում և վիթխարիորեն արագացնում է ազգերի մերձեցումն ու միաձուլումը[2]։

Կոմունիստական պարտիայի և Սովետական կառավարության ցուցումները վիթխարի նշանակություն ունեցան Ադրբեջանի, Հայաստանի և Վրաստանի ինքնուրույնության ու տնտեսական նախաձեռնության ընդլայնման գործում։

---

[1] Решения ЦК ВКП(б) о закавказских организациях, Баку, 1932, стр. 2—3.
[2] Վ. Ի. Լենին. Երկեր, հատ. 22, էջ 437։

Պարտիան գտնում էր, որ Անդրկովկասյան Ֆեդերացիան դեռևս բավականաչափ անելիքներ ունի։ Նա դեռ լիովին չէր լուծել իր առջև դրված մեծ խնդիրները։ Տվյալ պահին ԱՍՖՍՌ-ի լիկվիդացման փորձերը, նրա ղեկավար դերի թերագնահատումն ու նսեմացումը, կամ նրա կազմում գտնվող ռեսպուբլիկաների ինքնուրույնության սահմանափակման տենդենցները լուրջ վտանգ էին ներկայացնում ոչ միայն ժողովուրդների համագործակցության, այլև Անդրկովկասում պրոլետարական դիկտատուրայի գոյության համար։

Վրաստանի Կ(բ)Պ Թիֆլիսի Կոմիտեի պլենումում, 1932 թ. մարտին իր «Անդրֆեդերացիայի տաս տարին» զեկուցման մեջ Մ. Օրախելաշվիլին նշեց, որ «մեր պարտիան Անդրֆեդերացիայի միջոցով հաստատուն պայմաններ ստեղծեց Անդրկովկասի ժողովուրդների միասնության, նրանց տնտեսական ու կուլտուրական ծաղկման համար, մի Ֆեդերացիա, որն ամբողջովին արդարացրեց իրեն ոչ միայն որպես ազգային խաղաղության գործիք, այլև Անդրկովկասի ռեսպուբլիկաների ժողովրդական տնտեսության սոցիալիստական վերակառուցման օրգան»[1]։

Ամբողջ ուժերի ու միջոցների միավորումը, ռեսպուբլիկաների պետական միասնությունն հնարավորություն տվեց պատմական կարճ ժամկետում լիկվիդացնելու երկրամասի տնտեսական քայքայվածությունը, վերացնելու եղած հսկայական դժվարությունները, այն խթանեց Անդրկովկասյան Ռեսպուբլիկաների ֆողովրդական տնտեսության աննախընթաց զարգացմանը։

Սոցիալիստական շինարարության գլխավոր արդյունքն այն է, որ արդյունաբերությունն աճեց ավելի քան չորս անգամ։ Երկրամասի ինդուստրացման պրոցեսին զուգընթաց արագորեն աճում էր նաև աշխատուժը։

ԱՍՖՍՌ-ի արդյունաբերության առաջատար ճյուղի՝ նավթարդյունաբերության տեխնիկական վերակառուցումը նշանավորվեց նրանով, որ հնգամյակի խնդիրները կատարվեցին 2 և կես տարում։ Նոր ռայոնների լայն յուրացումը հնարավորություն ստեղծեց նախառևոլյուցիոն ժամանակի համեմատությամբ նավթի հանույթը ընդլայնել 2 անգամ, 1934 թ. այն հասցնելով մինչև 20,14 միլիոն տոննայի։

Ֆեդերացիայի ժողովրդական տնտեսության վերակառուցման ժամանակաշրջանում նոր ստեղծված ու զարգացող արտադրական ճյուղերից համամիութենական նշանակություն ձեռք բերեցին մարգանեցը (Չիատուրի), ֆերրոմարգանեցը (Զեստաֆոնի), ծծմբաքարը (Չիրակիձոր-Ալավերդի), պղնձահանույթի ընդարձակումը Ալավերդում, Զանգեզուրում, Կետաբեգում, բարիտը (Զովդար), տուֆը (Արթիկ), ցեմենտը (Կապսի, Արարատ, Թոուզ և այլն), մեքենաշինությունը (Թբիլիսի, Երևան), քարածխի հանույթի հետագա աճը (Տկվիբուլի, Տկվարչելի), քիմիական արդյունաբերության ստեղծումը (Կիրովական, Երևան, Ալավերդի, Քութայիսի)։

Աննախընթաց վերելք ապրեց նաև թեթև արդյունաբերությունը, որը հիմնվում էր երկրամասի գյուղատնտեսության հումքի բազայի վրա։

ԱՍՖՍՌ-ի սոցիալիստական ինդուստրացումը զուգակցվում էր հզոր էներգետիկ բազայի ստեղծման հետ, հատկապես առաջին հնգամյակի տարիներին էլեկտրակայանների հզորությունը աճեց 80-ից մինչև 253,5 հազար կիլովատտ։

[1] «Խորհրդային Հայաստան», № 54, 3 մարտի, 1932։

Հաջողությամբ ավարտվեց Անդրկովկասյան Ռեսպուբլիկաների գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցումը։ Կոմունիստական պարտիան և Սովետական պետությունը ոչինչ չէին խնայում գյուղական տնտեսության հանրային սեկտորի զարգացման համար։ 1929/1930 թթ. 126 միլ. ռուբլու դիմաց 1931 թ. ծախսվում է 220,3 միլ. ռ., որից սովխոզներին տրվում է 9,3 միլ. ռ., կոլտնտեսություններին՝ 72,5 միլ. ռ., ջրային տնտեսությանը՝ 45,7 միլ. ռ.։ Գյուղում սոցիալիստական տնտեսությունների ստեղծումը տալիս է իր դրական արդյունքը. տճում է եկամտաբերությունը, երևան են գալիս նոր տիպի տնտեսության առավելությունները։

Կենսագործելով Վ. Ի. Լենինի 1921 թ. դիրեկտիվը, Անդրկովկասի կոմունիստները հասան այն բանին, որ ցանքատարածություն Վրաստանում ընդարձակվեց 200 հազար հեկտարով, Հայաստանում՝ 340 հազար հեկտարով։ Ջրովի հողերի տարածությունը միայն Սովետական Հայաստանում 62 հազար հեկտարից բարձրացավ 154 հազար հեկտարի[1]։

Ադրբեջանական ՍՍՌ-ն դարձավ ՍՍՌՄ բամբակագործական երկրորդ բազան։ Կոմունիստական պարտիան վերջ տվեց աշխատավոր գյուղացիության դարավոր աղքատությանն ու կուլտուրական հետամնացությանը։

Մեծ էր Անդրֆեդերացիայի միջազգային նշանակությունը։ Նա ՍՍՌՄ-ի ավանգարդն էր Մերձավոր Արևելքում։ Նա իր գոյությամբ լավագույն պրոպագանդա էր հանուն լենինյան ազգային քաղաքականության։

Հակառակ բուրժուա-նացիոնալիստական գրչակների զրպարտությունների բարգավաճում է հայ, վրաց, ադրբեջանցի և մյուս ժողովուրդների ձևով ազգային, բովանդակությամբ սոցիալիստական կուլտուրան, գրականությունը, արվեստը։ Այդ ասպարեզում ձեռք են բերվում լուրջ հաջողություններ։

Կուլտուրական ռևոլյուցիայի իրագործման շնորհիվ Սովետական Անդրկովկասում ստեղծվեց մասսայական դպրոցների, բարձրագույն ուսումնական հաստատությունների, կուլտուր-լուսավորական հիմնարկների լայն ցանց։

Հիմնականում վերացվում է գործազրկությունը։ Բանվորների ռեալ աշխատավարձը աճում է 15,5 տոկոսով։ Առողջապահության աշխատավորների համար բաց է թողնվում 9 միլ. 800 հազար ռուբլի[2]։

Սոցիալիզմի կառուցման առաջին և հետագա հնգամյակների տարիներին Սովետական Միության ժողովուրդների բաղմազգ և համերաշխ ընտանիքում Ադրբեջանը, Հայաստանը, Վրաստանը վերացնելով իրենց տնտեսական, կուլտուրական դարավոր հետամնացությունը, դարձան առաջավոր ինդուստրիայի, սոցիալիստական գյուղատնտեսության և ծաղկած կուլտուրայի ռեսպուբլիկաներ։

Այս ակնառու տվյալները ցույց են տալիս, որ Անդրկովկասի կոմունիստական կազմակերպությունները ՍՄԿՊ Կենտկոմի ղեկավարությամբ հետևողականորեն իրականացնում էին Վ. Ի. Լենինի հայտնի ավանդները։

---

[1] «Պրավդա», № 160, հունիս, 1936։

[2] «Զարյա Վոստոկա», № 18, 1931։